ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԶԵԿՈՒՅՑ
20 փետրվարի – 3 մարտի, 2008 թ.

Փետրվարի 20-ին Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունը (ԸՄԴԱ), որի կազմում են ԵԱՀԿ-ի Ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակը (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ), ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովը (ԵԱՀԿ ԽՎ), Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովը (ԵԽ ԽՎ) եւ Եվրոպական խորհրդարանը (ԵԽ), հրապարակեց Նախնական հայտնաբերումների եւ եզրակացությունների միացյալ հայտարարությունը: Այս հայտարարությունում ասվում է, որ փետրվարի 19-ի նախագահական ընտրությունները «*հիմնականում անցկացվեցին ԵԱՀԿ-ի եւ Եվրախորհրդի նկատմամբ ստանձնած պարտավորությունների եւ չափանիշների համաձայն: Բարձրաստիճան պետական պաշտոնյաները իրական ջանքեր են գործադրել նախորդ ընտրություններում նշված թերությունները վերացնելու ուղղությամբ՝ ներառյալ օրենսդրական դաշտը, եւ պարբերաբար հայտնել են ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու իրենց մտադրության մասին: Այդուհանդերձ, հետագա բարելավումներ եւ համարժեք քաղաքական կամք է պահանջվում մնացյալ մարտահրավերներին անդրադառնալու համար, այն է՝ պետության եւ կուսակցության գործառույթների միջեւ հստակ տարբերակման բացակայություն, ընտրական գործընթացի նկատմամբ հանրության վստահության պակաս եւ ընտրությունում մրցողների նկատմամբ հավասար վերաբերմունքի ապահովում: Քվեների հաշվարկի գործընթացը չնվազեցրեց ընտրությունների մասնակիցների ունեցած կասկածները»:*

Հայտարարությունը շեշտադրում էր, որ ընտրությունների վերջնական գնահատումը մասամբ կախված է ընտրական գործընթացների մնացյալ փուլերի իրականացումից, այդ թվում՝ վերջնական արդյունքների ամփոփումն ու հայտարարումը եւ ընտրությունների հաջորդ օրը հնարավոր բողոքների եւ բողոքարկումների ընթացքը: Փետրվարի 20-ից ի վեր ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելությունը (ԸԴԱ) շարունակել է հետընտրական գործընթացների դիտարկումը:

Սույն միջանկյալ զեկույցը հարկ է ընթերցել նախընտրական միջանկյալ զեկույցների, ինչպես նաեւ Նախնական հայտնաբերումների եւ եզրակացությունների մասին հայտարարության հետ համատեղ: Ընտրական գործընթացի լիակատար ավարտից մոտ երկու ամիս անց ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը կհրապարակի համակողմանի վերջնական զեկույց՝ ներառելով առաջարկությունները:

I. ԱՄՓՈՓՈՒՄ

- Փետրվարի 20-ին Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ) հայտարարել է ընտրությունների նախնական արդյունքները, համաձայն որոնց ընտրություններում հաղթել էր վարչապետ Սերժ Սարգսյանը: Երկրորդ տեղը զբաղեցնող թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանը մեղադրանքներ է ներկայացրել լայնատարած ընտրակեղծիքների մասին եւ հայտարարել, որ ինքն է հաղթել ընտրություններում:

- Շարունակաբար տեղի են ունեցել ընտրությունների անցկացման դեմ ցույցեր, որոնք խաղաղ են ընթացել մինչ մարտի 1-ը, երբ ոստիկանությունը ցրեց ցուցարարներին: Ցուցարարների, ոստիկանության եւ զինվորականների միջեւ բախումները վերածվեցին բռնության, որի արդյունքում եղան մահվան դեպքեր եւ վիրավորներ, եւ նախագահ Ռոբերտ Քոչարյանը հայտարարեց արտակարգ իրավիճակ: Փետրվարի 26-ին Սերժ Սարգսյանը նախագահի մյուս թեկնածուներին արեց համագործակցության առաջարկ:

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները (ԸԸՀ) կատարել են 135 Տեղամասային ընտրական հանձնաժողովների (ՏԸՀ) արդյունքների վերահաշվարկ: Վերահաշվարկի գործընթացում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդները գրանցել են թերություններ, ներառյալ անհամապատասխանություններ եւ սխալներ, որոնց մի մասը հարցերի տեղիք է տալիս տվյալ ՏԸՀ-ների եւ ԸԸՀ-ների անկողմնակալության վերաբերյալ:

- Փետրվարի 24-ին ԿԸՀ-ն հայտարարել է, որ պարոն Սարգսյանը հաղթել է ընտրություններում՝ ստանալով քվեների 52.8 տոկոսը: Պարոն Տեր-Պետրոսյանը ստացել է քվեների 21.5 տոկոսը եւ Արթուր Բաղդասարյանը՝ 16.7 տոկոսը: ԿԸՀ ութ անդամներից երկուսը արդյունքների պաշտոնական արձանագրությունը չեն ստորագրել:

- ԿԸՀ կայքում հրապարակված բոլոր ՏԸՀ-ների տվյալները բացահայտեցին որոշ անոմալլիաներ որոշակի ՏԸՀ-ներում, այդ թվում նաեւ ընտրողների անհավանական բարձր մասնակցություն՝ պարոն Սարգսյանը ստացել է քվեների ավելի, քան 99 տոկոսը, եւ որոշ ՏԸՀ-ներում, հատկապես Երեւանում, անվավեր քվեաթերթիկների շատ բարձր թիվ:

- ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն ստացել է տեղեկատվություն, այն մասին, որ ընտրությունների օրը ՏԸՀ-ները չեն ընդունել դիմումներ: Հետընտրական շրջանում ԿԸՀ-ն ստացել է մի քանի բողոք: Վերջինիս կողմից դրանց քննման գործընթացի արդյունքում բողոքատուներին չի տրամադրել արդյունավետ պաշտպանություն եւ սա, հետեւաբար, մտահոգության առիթ է տալիս նրա՝ քաղաքացիների ընտրական իրավունքի պաշտպանության ապահովման պարտավորության վերաբերյալ:

- Հետընտրական շրջանում հիմնական հեռարձակող լրատվամիջոցները, այդ թվում նաեւ հանրային հեռուստատեսությունն ու ռադիոն, մեծապես լուսաբանել են իշխանությունների տեսակետները, սակայն հազվադեպ են հեռարձակել փետրվարի 19-ի քվեարկության անցկացման վերաբերյալ մտահոգություններ ունեցող անձանց տեսակետները:

II. ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Նախնական հայտնաբերումների եւ եզրակացությունների մասին հայտարարության մեջ ԸՄԴԱ-ն այցելած ընտրատեղամասերի ավելի քան 6 տոկոսում նկատվել է լարվածություն կամ անհանգիստ վիճակ, ինչպես նաեւ « բռնության մի քանի առանձին դեպք»՝ չնայած «հարաբերականորեն հանգիստ մթնոլորտի»: Դրանից հետո ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը ԸԴԱ-ն տարբեր աղբյուրներից ստացել է տեղեկատվություն վստահված անձանց, տեղական դիտորդների,

ՏԸՀ անդամների եւ որոշ լրագրողների նկատմամբ գործադրված հարձակումների եւ ահաբեկումների մասին, հատկապես Երեւանի որոշ համայնքներում [1]:

ԸՄԴԱ-ն դիտարկել է քվեների հաշվարկը 111 ՏԸՀ-ներում: Քվեների հաշվարկը գնահատվել է որպես «վատ» կամ «շատ վատ» 17 ընտրատեղամասերում (այցելած տեղամասերի մոտ 16 տոկոսը) [2]: ԸՄԴԱ որոշ դիտորդներ զեկուցել են «նշանակալի ընթացակարգային սխալների» մասին. քվեաթերթիկների դնելը մեկ այլ թեկնածուի քվեաթերթիկների տրցակի վրա, արձանագրություններ ստորագրելը մինչ հաշվարկի ավարտը կամ չլրացված արձանագրություններ ստորագրելը, քվեատուփերի լցոնման փաստեր, անուշադիր վերաբերմունք ընտրական նյութերի նկատմամբ, ԸՄԴԱ դիտորդների աշխատանքին խոչընդոտելու փորձեր[3]: Ընտրությունների օրվա հայտնաբերումների հետագա վերլուծությունը ցույց տվեց, որ ԸՄԴԱ որոշ դիտորդների զեկույցների համաձայն ՏԸՀ նախագահներն անընդհատ ստացել են հեռախոսազանգեր՝ արդյունքների վերաբերյալ տվյալները զեկուցելու խնդրանքով՝ հատկապես պարոն Սարգսյանի օգտին եղած քվեների տոկոսի վերաբերյալ[4]:

ԸՄԴԱ դիտորդները հետեւել են արդյունքների ամփոփման գործընթացին բոլոր 41 ԸԸՀ-ներում, որի վերաբերյալ լրացվել է դիտարկման 85 ձեւ: Լրացված ձեւերի մոտ 10 տոկոսում գործընթացը բացասական է գնահատված, իսկ 7 տոկոսը գնահատել է, որ ԸԸՀ-ների աշխատանքում առկա էր թափանցիկության պակաս: Թերությունների շարքում էին որոշ ՏԸՀ-ներից չկնքված փաթեթներով ստացված քվեարկության նյութերի դեպքեր[5], ՏԸՀ արդյունքների արձանագրության մեջ տվյալների ոչ համահունչ լինելը [6], ՏԸՀ-ները ԸԸՀ-ից

---

1 Թիվ 1 ԸԸՀ-ում (Ավան, Երևան) երկու դեպքում թեկնածուների վստահված անձիք հնարավոր ֆիզիկական պատժի սպառնալիքներ են ստացել: Թիվ 4 ԸԸՀ -ում (Արաբկիր, Երևան) և թիվ 5 ԸԸՀ-ում (Դավիթաշեն, Երևան) երեք թեկնածուների վստահված անձիք ֆիզիկական հարձակման են ենթարկվել՝ երկու դեպքում ընտրատեղամասի ներսում և մեկ դեպքում ընտրատեղամասի մերձակայքում: Թիվ 4 ԸԸՀ -ում մի տեղական դիտորդ ֆիզիկական հարձակման է ենթարկվել և կորցրել է գիտակցությունը: Թիվ 1 ԸԸՀ -ում մի անհայտ անձ հարվածել է ՏԸՀ-ի մի անդամի, իսկ թիվ 28 ԸԸՀ -ում (Աբովյան, Կոտայք) ՏԸՀ-ի մի անդամ ընտրությունների օրը բռնի կերպով դուրս է բերվել ՏԸՀ-ից և այլևս չի վերադարձել: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՆԱ-ն նաև ծանոթացել է ՏԸՀ եկու անդամների, երեք վստահված անձանց և մեկ քաղաքացու կողմից թիվ 28 ԸԸՀ -ին ներկայացված դիմում-բողոքներին հիշյալ ԸԸՀ-ի ՏԸՀ-ից իրենց՝ բռնի ուժով հեռացման մասին:

2 Օրինակ՝ թիվ 13/18, 13/30, 17/01 և 32/58 ՏԸՀ-ներում:

3 Օրինակ՝ ՄԸԴԱ դիտորդները թիվ 22/15 ընտրատեղամասում արձանագրել են, որ ՏԸՀ-ի անդամների վրա ճնշում է գործադրվել այլ թեկնածուների օգտին նշված քվեաթերթիկներից ավելացնել Սերժ Սարգսյանի քվեներին: Թիվ 13/18 ընտրատեղամասում հանձնաժողովի նախագահը ցույց չի տվել նշված քվեաթերթիկները, ՏԸՀ-ի անդամները հաշվել են քվեները՝ ձեռքներին գրիչներ բռնած, քվեաթերթիկները դրվել են սխալ թեկանծուների տրցակների վրա և արձանագրությունները ստորագրվել են մինչև քվեների հաշվարկի ավարտը: Թիվ 11/32 ընտրատեղամասում ՏԸՀ անդամները ստորագրել են դատարկ արձանագրություն: Թիվ 32/58 տեղամասում փորձեր են արվել խոչնդոտել ՄԸԴԱ դիտորդներին՝ տեսնելու քվեաթերթիկների վրա արված նշումները: Այնուամենայնիվ, նրանք նկատել են, որ պրն. Տեր-Պետրոսյանի օգտին նշված քվեաթերթիկները դրվել են պրն. Սարգսյանի տրցակի վրա: Երկու դեպքում քվեատուփերի միջից դուրս են հանվել «շգուշորեն միասին դրված » ծրարների փաթեթներ: Բոլոր այդ քվեաթերթիկները նշված էին պրն. Սարգսյանի օգտին: Արդյունքների արձնագրությունը չէր ստորագրվել, ընտրական նյութերը կնքված չէին և ոչ լիազորված անձիք ուղեկցել էին դրանց տեղափոխումը ԸԸՀ:

4 Օրինակ՝ թիվ 25/04 ՏԸՀ-ում Նախագահին վեց անգամ կանչել են զեկուցելու արդյունքների մասին:

5 Օրինակ՝թիվ 11, 22, 29 և 30 ԸԸՀ-ների որոշ ՏԸՀ-ներ:

6 ԸՄԴԱ դիտորդները գրանցել են, որ արձանագրությունների մեջ փոփոխություններ են կատարվել, երբ թվերը չեն համընկել (դիտարկումների 39 տոկոսը):

հեռացել են ընտրական նյութերով[7] եւ ԸՄԴԱ դիտորդներին չեն թույլատրել ուսումնասիրել արձանագրությունները[8]: Որոշ դեպքերում ԸՄԴԱ դիտորդները զեկուցել են արդյունքների ամփոփման գործընթացի խախտումների մասին[9]:

Փետրվարի 20-ին ԿԸՀ-ն հայտարարեց նախնական արդյունքները, համաձայն որոնց պարոն Սարգսյանը ստացել էր քվեների 52.86 տոկոսը, հետեւապես երկրորդ փուլի անցկացումը անհրաժեշտ չէր: Այս տվյալների համաձայն պարոն Տեր-Պետրոսյանը ստացել էր ձայների 21.50 տոկոսը, իսկ Արթուր Բաղդասարյանը՝ 16.67 տոկոսը: Վերջնական արդյունքները հայտարարվել են փետրվարի 24-ին եւ նշանակալիորեն չեն տարբերվել նախնական արդյունքներից:

III. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Լեւոն Տեր-Պետրոսյանը հայտարարել էր ընտրություններում լայնատարած ընտրակեղծիքների եւ խախտումների մասին, ինչպես նաեւ այն, որ ինքն է հաղթել ընտրություններում[10]: Արթուր Բաղդասարյանը հայտարարել էր, որ բազմաթիվ խախտումները հարցականի տակ են դնում ընտրությունների լեգիտիմությունը: Չորրորդ տեղը զբաղեցրած թեկնածու Վահան Հովհաննիսյանը հրաժարվեց Խորհրդարանի փոխխոսնակի պաշտոնից, խոսելով ընտրախախտումների մասին, չնայած այն բանի, որ իր կուսակցությունը հետագայում հայտարարեց, որ չի վիճարկելու արդյունքները: Հինգերորդ տեղը զբաղեցրած թեկնածու Վազգեն Մանուկյանը նույնպես հայտարարել է, որ եղել են ընտրական կեղծիքներ, մինչդեռ վեցերորդ տեղը զբաղեցնող Տիգրան Կարապետյանն առաջինն էր, որ դիմեց Սահմանադրական դատարան:

Դեռ մինչ ընտրությունների օրը պարոն Տեր-Պետրոսյանն իր աջակիցներին կոչ էր արել հավաքվել Երեւանում փետրվարի 20-ին «հաղթանակի» կամ «բողոքի» հանրահավաքի: Փետրվարի 21-ից մինչ մարտի 1-ի վաղ առավոտյան ցուցարարները կազմակերպել էին խաղաղ, թեեւ ոչ պաշտոնապես արտոնված, հավաք Ազատության հրապարակում: Նրանք նաեւ կազմակերպել են բազմաթիվ խաղաղ երթեր[11]: 2008 թվականի փետրվարի 21-ին կազմակերպիչները հայտարարել են, որ իրենց նպատակն է հասնել ընտրությունների չեղյալ

---

7 Օրինակ՝ թիվ 22/20 ՏԸՀ -ի անդամները ՏԸՀ ժամանելուց հետո մոտ չորս ժամով անհետացել էին: Երբ նրանք վերադարձան քվեարկության նյութերն ակնհայտորեն բացվել էին:

8 Օրինակ՝ թիվ 37 ԸԸՀ -ում (Գորիս) ԸԸՀ-ի նախագահը խոչնդոտել է, որ ԸՄԴԱ դիտորդները տեսնեն 25 արձանագրություններ:

9 Օրինակ՝ թիվ 14 ԸԸՀ -ում (Աշտարակ) պրն. Տեր-Պետրոսյանի վստահված անձը վերահաշվարկ է պահանջել այն բանից հետո, երբ թիվ 14/32 ՏԸՀ-ի նախագահը ներկայացրել է ՏԸՀ անդամների կողմից ստորագրված 2 օրիգինալ դատարկ արձանագրություններ: Թիվ 22 ԸԸՀ -ում (Գավառ) թիվ 22/30 ՏԸՀ-ն բերել է արձանագրության միայն մեկ օրինակ: Նախագահին հետ են ուղարկել բերելու մյուս օրինակները: Պակասող արձանագրություններով վերադառնալուց հետո առաջին արձանագրությունը մերժվում է և ընդունվում է պակասողը: Զգալի տարբերությունների թվում են Վահան Հովհաննիսյանի 10 քվեի փոխարեն 260 քվեները և Սերժ Սարգսյանի 902 քվեի փոխարեն 602 քվեները:

10 Պրն. Տեր-Պետրոսյանը նաև մի շարք ընդհանուր հայտարարություններ է արել՝ կասկածի տակ առնելով ՄԸԴԱ-ի կողմից ընտրություններին տրված գնահատականը և նշելով, որ «դիտորդները պատասխանատու են Հայաստանում անց կացված այս խայտառակ ընտրությունների համար»:

11 Պրն. Տեր-Պետրոսյանի շտաբը տեղեկացրել է Երևան քաղաքի իշխանություններին, որ փետրվարի 20-ին Երևանում անց է կացնելու հանրահավաք: Այնուամենայնիվ, նրանք Երևան քաղաքի իշխանություններին չեն տեղեկացրել Ազատության հրապարակում հաջորդած հավաքի և երթերի մասին:

համարելուն եւ դրանց վերանցկացմանը: Իշխանություններն, ընդհանուր առմամբ, ընդունեցին բողոքի անցկացումը:

Փետրվարի 23-ին նախագահ Քոչարյանը հանդիպումներ է անցկացրել զինված ուժերի, ոստիկանության եւ Ազգային անվտանգության ծառայության ղեկավարության հետ, որոնց ժամանակ նա խոսել է «իշխանությունը զավթելու ոչ լեգիտիմ փորձի» եւ հայտարարել երկրում սահմանադրական կարգի եւ կայունության պահպանմանն ուղղված «վճռական եւ կտրուկ» գործողությունների մասին: Հաջորդող օրերին կալանավորվել են անձինք «զենքի ապօրինի պահելու», «իշխանության ներկայացուցչի նկատմամբ ֆիզիկական բռնության գործագրման» եւ «սուտ մատնության» կասկածներով [12]: Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը այցելել է ձերբակալված անձանց, որպեսզի հավաստիանա, որ նրանք ունեն իրավական խորհրդատվությունից օգտվելու հնարավորություն եւ նրանց վատ չեն վերաբերվում:

Փետրվարի 26-ին Սերժ Սարգսյանը նախագահի մյուս թեկնածուներին կոչ է արել՝ համագործակցության առաջարկով: Փետրվարի 29-ին, չնայած ընտրությունների անցկացման վերաբերյալ իր ավելի վաղ արած հայտարարություններին, Արթուր Բաղդասարյանը ստորագրել է քաղաքական համագործակցության համաձայնագիր: Յոթերորդ տեղը զբաղեցրած թեկնածու Արտաշես Գեղամյանը համագործակցության իր պատրաստակամություն է հայտնել դեռեւս պարոն Սարգսյանի համագործակցության հայտարարության կոչից առաջ: Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, որն առաջադրել էր չորրորդ տեղը զբաղեցրած թեկնածու Վահան Հովհաննիսյանին, հայտարարել էր, որ «[իշխող կոալիցիայի հետ] համագործակցությունը դադարեցնելու մեր առաջարկությունը պետք է քննարկվի»: Մարտի 1-ին Արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը նախագահ Քոչարյանի անունից ասել է, որ Լեւոն Տեր-Պետրոսյանը մերժել է համագործակցության առաջարկը:

Ըստ ոստիկանության՝ մարտի 1-ի առավոտյան ոստիկանությունը Ազատության հրապարակում փորձել է իրականացնել բողոքի ցույցի տարածքի խուզարկում: Պաշտոնական հայտարարությամբ ոստիկանությունը նշել է, որ իրենք ստացել էին տեղեկատվություն, համաձայն որի ցուցարարներին բաժանվելու էին զենքեր եւ պայթուցիկ նյութեր եւ որ տեղի էին ունենալու անկարգություններ: Պաշտոնական տեղեկատվության համաձայն վիրավորվել է 31 անձ: Պարոն Տեր-Պետրոսյանը ոստիկանության կողմից տարվել է իր տուն եւ մնացել այնտեղ՝ չնայած իշխանությունները հերքել են նրա՝ տնային կալանքի մեջ գտնվելու փաստը:

Ավելի ուշ նույն օրը ցուցարարները կրկին հավաքվեցին, եւ անկարգություններ տեղի ունեցան Ֆրանսիայի դեսպանատան եւ Երեւանի քաղաքապետարանի շրջակայքում: Վաղ կեսօրին այս տարածքում հավաքվել էր մոտ 7,000 (համաձայն պաշտոնական տվյալների) [13] հոգանոց բազմություն: Վաղ երեկոյան տեղի են ունեցել լուրջ անկարգություններ՝ վերածվելով բռնության, թալանի եւ վանդալիզմի: Համաձայն պաշտոնական աղբյուրների

[12] Համաձայն Արտաքին գործոց նախարարի հայտնած տեղեկատվության փետրվարի 29-ին ձերբակալվել են 25 անձիք, 15-ը կալանավորվել են առանց մեղադրանքի առաջադրման և 6-ին ներկայացվել են մեղադրանքներ: Ըստ Լևոն Տեր-Պետրոսյանի գրասենյակի՝ փետրվարի 28-ի դրությամբ 21 անձիք տարբեր մեղադրանքներվ կալանքի տակ էին պահվում, իսկ 17-ը բաց էին թողնվել:

[13] Քանակի հաշվարկները տարբեր են՝ ներառյալ մինչև 30 000 հասնող հաշվարկները:

արդյունքում եղել են 8 մահացության դեպք եւ 130 վիրավոր: Ժամը 22:30-ի մոտ Երեւան քաղաքում հայտարարվեց արտակարգ իրավիճակ[14], որն արգելք էր դնում ցույցերի եւ հավաքների վրա, եւ լրատվամիջոցների լուսաբանումը սահմանափակվում էր պաշտոնական տեղեկատվությամբ:

Փետրվարի 20-ի ԸՄԴԱ հայտարարության լուսաբանումը հեռուստատեսությամբ հիմնականում ներկայացրել է դրական կետերը եւ, ընդհանուր առմամբ, բաց է թողել նշված թերությունների վերաբերող մասերը: Չնայած գործընթացի անցկացման նկատմամբ հանրության մեջ եղած զգալի հակասություններին՝ հիմնական հեռարձակող լրատվամիջոցները, այդ թվում նաեւ հանրային հեռուստատեսությունն ու ռադիոն, մեծ ծավալով լուսաբանել են իշխանությունների տեսակետները, սակայն հազվադեպ են հեռարձակել փետրվարի 19-ի քվեարկության անցկացման վերաբերյալ մտահոգություններ ունեցող անձանց տեսակետները:

IV. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿ

Ընտրական օրենսգրքի 40.2 հոդվածի համաձայն ՏԸՀ-ներում գրանցված վստահված անձինք եւ թեկնածուները կարող են տվյալ ՏԸՀ արդյունքների վերահաշվարկի դիմում ներկայացնել համապատասխան ԸԸՀ՝ մինչ ընտրությունների հաջորդ օրվա (փետրվարի 20) ժամը 14:00-ը: ԸԸՀ-ները վերահաշվարկ են իրականացնում հնգօրյա ժամկետում, այն է՝ փետրվարի 21-ից մինչ փետրվարի 24-ի ժամը 14:00-ը:

Համաձայն ԿԸՀ-ի վերահաշվարկի դիմումներ են ստացվել 25 ԸԸՀ-ներում՝ 159 ՏԸՀ արդյունքների վերաբերյալ: Մնացած դիմումները ԸԸՀ-ները մերժել են այն հիմնավորմամբ, որ վերահաշվարկ պահանջելու վերջնաժամկետն արդեն անցել է: ԸԸՀ-ները մերժել են 34 դիմում՝ դրանց «անհիմն» լինելու պատճառով: ԿԸՀ-ում գրանցվել են մի քանի բողոքներ, համաձայն որոնց ԸԸՀ-ները չեն գործել շարունակական հիմքերի վրա մինչ փետրվարի 20-ի ժամը 14:00-ը, կամ այլապես խոչընդոտել են վերահաշվարկի դիմումների ընդունման գործընթացին[15] (տե՛ս Բաժին VI. Դիմումներ եւ բողոքներ):

---

[14] ԵԱՀԿ-ի նկատմամբ ստանձնած պարտավորություններին համապատասխան Հայաստանի իշխանությունները իրազեկել են ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ին 2008թ.-ի մարտի 1-ին 20 օրով Արտակարգ իրավիճակ հայտարարման մասին Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրի վերաբերյալ, որը նախատեսում է 1) ժողովների, հանրահավաքների, ցույցերի, երթերի և այլ զանգվածային միջոցառումների իրականացման արգելում 2) գործադուլների և կազմակերպությունների գործունեությունը դադարեցնող կամ կասեցնող այլ միջոցառումների արգելում 3) իրավապահ մարմինների կողմից, անհրաժեշտության դեպքում, անձանց, տրանսպորտային միջոցների տեղաշարժի սահմանափակում և զննության իրականացում 4) զանգվածային լրատվության միջոցների կողմից պետական և ներքաղաքական հարցերի առնչությամբ հրապարակումները կարող են իրականացվել բացառապես պաշտոնական տեղեկատվության սահմաններում 5) առանց համապատասխան պետական մարմինների թույլտվության թռուցիկների և այլ ձևով քաղաքական քարոզչության իրականացման արգելում 6) արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայող հանգամանքների վերացմանը խոչընդոտող կուսակցությունների և այլ հասարակական կազմակերպությունների գործունեության ժամանակավոր կասեցում 7) արտակարգ դրության իրավական ռեժիմը խախտած և տվյալ տարածքում չբնակվող անձանց վտարում՝ նրանց միջոցների հաշվին, իսկ միջոցներ չլինելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ կատարված ծախսերի հետագա փոխհատուցման պայմանով:

[15] Օրինակ՝ ԿԸՀ-ին ներկայացվել են բողոքներ թիվ 32 ԸԸՀ -ի վերաբերյալ, որը մերժել էր թիվ 32/20, 32/30 և 32/46 ՏԸՀ-ներում ձայների վերահաշվարկ կատարել՝ հիմնավորելով, որ վերահաշվարկի ժամկետը սպառվել էր: Դիմողները հաստատում էին, որ եղել են ԸԸՀ-ում ժամը 13.30-ին: Թիվ 8 ԸԸՀ -ի թիվ 8/6, 8/16, 8/17, 8/21, 8/23 և

Վերահաշվարկի դիմումներ են ներկայացրել մի քանի թեկնածուներ: Ըստ ԿԸՀ-ի Արամ Հարությունյանը կամ նրա վստահված անձինք դիմել են 27 վերահաշվարկ կատարելու դիմումով, հիմնականում թիվ 1, 4, 8 եւ 13 ԸԸՀ-ներում (բոլորը Երեւանում) [16]: Այս դիմումների մի մասը գրանցվել են փետրվարի 20-ի ժամը 00:00-ից քիչ անց, այդ թվում նաեւ առնվազն մեկ դեպքում նույնիսկ այն ՏԸՀ-ի արդյունքները վիճարկելու համար, որում դեռ հաշվարկ էր իրականացվում[17]: Մյուս թեկնածուները վերահաշվարկ պահանջել են պարոն Հարությունյանի դիմումներից հետո: Ընդհանուր առմամբ ԸԸՀ-ները ՏԸՀ արդյունքների վերահաշվարկն իրականացրել են դիմումների գրանցման հերթականության համաձայն: Որոշ դեպքերում, օրինակ թիվ 1, 4 եւ 13 ԸԸՀ-ներում, ԸԸՀ-ն չի իրականացրել այլ թեկնածուների կողմից պահանջած վերահաշվարկը, քանզի զբաղված է եղել պարոն Հարությունյանի պահանջով իրականացվող վերահաշվարկով[18]:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՆԱ դիտորդները հետեւել են վերահաշվարկի գործընթացին բոլոր ԸԸՀ-ներում, որտեղ այն իրականացվել է, չնայած չեն դիտարկել բոլոր ՏԸՀ-ների վերահաշվարկները: Դիտարկված վերահաշվարկների մեծամասնությունը ցույց է տվել, որ առաջնային հաշվարկում կային անհամապատասխանություններ եւ սխալներ, որոնց մի մասը նշանակալի էր եւ կասկածի տակ էր դնում ՏԸՀ-ների եւ ԸԸՀ-ների քաղաքական անկողմնակալության հարցը:

Թիվ 5 ԸԸՀ-ն (Դավիթաշեն, Երեւան), օրինակ, անգործություն է ցուցաբերել փետրվարի 23-ին թիվ 5/21 ՏԸՀ վերահաշվարկի, ինչպես նաեւ անհայտ անձանց կողմից ԸԸՀ գրոհման վերաբերյալ, ովքեր ստիպել են ԸԸՀ անդամներին եւ այլ իրավասու անձանց, այդ թվում նաեւ թեկնածուների վստահված անձանց, լրագրողների եւ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդի հեռանալ ԸԸՀ տարածքից, մինչ ոստիկանները պասսիվորեն կանգնած էին: Փետրվարի 23-ին, թիվ 13/10 ՏԸՀ արդյունքների վերահաշվարկի ժամանակ Լեւոն Տեր-Պետրոսյանի օգտին քվեարկված թերթիկներով ծրարն անհետացել է թիվ 13 ԸԸՀ-ից (Էրեբունի, Երեւան): Մեկ այլ դեպքում, թիվ 4 ԸԸՀ-ում (Արաբկիր, Երեւան) ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդը տեսել է, ինչպես է ԸԸՀ-ն 34 քվեաթերթիկ հանում, որոնց վրա նշումներ կան թե՛ պարոն Տեր-Պետրոսյանի, թե՛ պարոն Սարգսյանի օգտին, քվեաթերթիկների այն խրձից, որոնք նախկինում՝ թիվ 4/03 ՏԸՀ-ում

8/24 ՏԸՀ-ներում վերահաշվարկ կատարելու դիմումները ներկայացվել են մինչև ժամը 14.00-ը, սակայն ԸԸՀ-ն մերժել է գրանցել դիմումները մինչև դիմումների գրանցման վերջնաժամկետի ժամը 14.00-ին լրանալը: Թիվ 34/04, 34/07 և 34/30 ՏԸՀ-ներում վերահաշվարկ չի կատարվել: Բողոք է ներկայացվել, որ թիվ 35ԸԸՀ -ի նախագահը չի կատարել վերահաշվարկ, քանի որ միայն ՏԸՀ-ի հինգ անդամ են ներկա եղել՝ չնայած այն բանին, որ քվորում ապահովելու իրավական պահանջ գոյություն չունի: Վերահաշվարկի այլ պահանջներ են մերժվել թիվ 3, 21, 23, 24 և 38 ԸԸՀ-ներում: ԿԸՀ-ն պատասխանել է, որ նման բողոքները պետք է ուղղվեն Վարչական դատարանին:

16 Շփոթեցնող է, թե որ ՏԸՀ-ից է պրն. Հարությունյանը վերահաշվարկ պահանջել, քանի որ այն ցուցակը, որ նա տրամադրել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՆԱ-ին տարբերվում է նրա՝ ԿԸՀ-ին տրամադրված ցուցակից:

17 Թիվ 4/18 ՏԸՀ-ում քվեների հաշվարկի ժամանակ ներկա գտնվող ԸՆԱ դիտորդները զեկուցել են, որ հաշվարկն ավարտվել է ժամը 03.10-ին և քվեների հաշվարկի ժամանակ ընտրատեղամասում թեկնածուի վստահված անձը ներկա չի եղել:

18 Թիվ 1 ԸԸՀ-ում վերահաշվարկ կատարելու Արթուր Բաղդասարյանի երկու դիմումները չեն բավարարվել: Համաձայն թիվ 4 ԸԸՀ -ի պաշտոնական մատյանի տվյալների փետրվարի 20-ին ժամը 00.01-ին պրն. Հարությունյանը պահանջել է վերահաշվարկ կատարել ինը ՏԸՀ-ներում: Թիվ 4ԸԸՀ -ն ավարտել է վերահաշվարկի համար նախատեսված ժամանակահատվածում ներկայացված վերահաշվարկ կատարելու տասներկու պահանջներից միայն յոթի վերահաշվարկը: Պրն. Տեր-Պետրոսյանի կողմից ներկայացված վերահաշվարկ կատարելու երեք դիմումներից երկուսին ընթացք չի տրվել:

հաշվարկվել էին որպես պարոն Տեր-Պետրոսյանի օգտին քվեարկված վավեր քվեաթերթիկներ: Այլ թերությունների թվում էին քվեաթերթիկների ոչ անհրաժեշտ դասումը որպես անվավեր[19], ինչպես նաեւ քվեաթերթիկների վրա կատարված նշումների կամ նրանց վավեր լինելու ուսումնասիրության չկատարումը[20]:

Դատախազությունը երկու քրեական գործ է հարուցել թիվ 5 եւ թիվ 13 ԸԸՀ-ներում կատարված դեպքերի վերաբերյալ: Փետրվարի 27-ին ԿԸՀ հայտնել է, որ եւս 23 գործ է փոխանցվել դատախազին: Մտահոգության առիթ է տալիս այն փաստը, որ ԿԸՀ անդամը (Ժառանգություն կուսակցության կողմից առաջադրված) առանց ԿԸՀ համաձայնության[21] կարող է քրեական հետապնդման մեջ գտնվել թիվ 5 ԸԸՀ-ում ընտրական նյութերի բացման համար, մինչդեռ ոչ մի գործողություն չի ձեռնարկվել թիվ 5/21 ՏԸՀ արդյունքների վերահաշվարկ կատարելու ցանկություն չունեցող ԸԸՀ անդամների կամ կարգի պահպանման փորձ չանող ոստիկանների դեմ, եւ որ չեն եղել ձերբակալություններ ԸԸՀ տարածքի «գրոհման» հետ կապված:

Վերահաշվարկի իրականացման վերջնաժամկետի սպառման պահին 24 ՏԸՀ-ների վերահաշվարկ դեռ կատարված չէր: Չնայած այն բանին, որ օրենսդրությունը նախատեսում է է, որ ԸԸՀ-ները կարող են երկարացնել իրենց աշխատանքային ժամերը, այնուամենայնիվ, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն չունի տեղեկատվություն, որեւէ ԸԸՀ-ի վերաբերյալ, որ այդպես է վարվել աշխատանքն ավարտելու համար:

V. ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Փետրվարի 24-ին ԿԸՀ-ն արտակարգ նիստում հայտարարեց ընտրությունների վերջնական արդյունքները[22]՝ Սերժ Սարգսյան (862,369 քվե), Լեւոն Տեր-Պետրոսյան (351,222), Արթուր Բաղդասարյան (272,427), Վահան Հովհաննիսյան (100,966), Վազգեն Մանուկյան (21,075), Տիգրան Կարապետյան (9,792), Արտաշես Գեղամյան (7,524), Արման Մելիքյան (4,399) եւ Արամ Հարությունյան (2,892): Ըստ ԿԸՀ արձանագրության ընտրողների մասնակցությունն է եղել 1,671,027 (մոտ 70.5 տոկոս)[23]:

---

19 Օրինակ՝ թիվ 34/26 ՏԸՀ-ում (Գյումրի):

20 Օրինակ՝ թիվ 7/20 ՏԸՀ-ում (Մալաթիա Սեբաստիա, Երեւան):

21 Դատախազը հետաքննություն է սկսել ԿԸՀ անդամի կողմից ՏԸՀ-ի բնականոն աշխատանքների խոչնդոտման՝թիվ 5/21 ՏԸՀ-ի կնքած պարկի բացման և ԸԸՀ-ի կարգադրությունների անտեսման առնչությամբ: Այդ ժամանակ այնտեղ ներկա գտնվող ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդը զեկուցել է, որ այն ժամանակ, երբ ԿԸՀ անդամը բացել է նյութը, ԸԸՀ միայն երկու անդամներ են ներկա գտնվել այնտեղ և նրանք առարկություններ չեն ներկայացրել նրա գործողությունների վերաբերյալ:

22 Այս նիստը տեղի է ունեցել վերահաշվարկ կատարելու համար նախատեսված ժամանակի լրանալուց չորս ժամ անց, բայց մինչև ՏԸՀ-ներում վերահաշվարկ կատարելու վերաբերյալ ԸԸՀ-ների կողմից ընդունված որոշումները բողոքարկելու ժամանակի լրանալը: Համաձայն Վարչական դատավարության օրենսգրքի ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը կամ անգործությունը կարող է բողոքարկվել եռօրյա ժամկետում: Հետևաբար, փետրվարի 24-ին կատարված վերահաշվարկներին առնչվող դիմումներ կարող էին ներկայացվել մինչև փետրվարի 27-ը: Վերահաշվարկ կատարելու վերջին դիմումը ներկայացվել է փետրվարի 23-ին: Այնուամենայնիվ, օրենքը իրար հակասող վերջնաժամկետներ է սահմանում, քանի որ այն ավելի երկար ժամանակ է նախատեսում դիմումների ներկայացման համար, քան վերջնական արդյունքների հայտարարման համար:

23 Հիմնված ԿԸՀ-ի կողմից նախնական արդյունքների հայտարարման ժամանակ նշված գրանցված ընտրողների թվի: Վերջնական արդյունքների հայտարարման ժամանակ գրանցված ընտրողների թիվը կրկին չի հայտարարվել:

Վերջնական արդյունքների արձանագրությունը ստորագրվել է ԿԸՀ ութ անդամներից վեցի կողմից: Օրինաց երկիր եւ Ժառանգություն կուսակցությունների կողմից առաջադրված անդամների արձանագրությունը չեն ստորագրել: ԿԸՀ արձանագրությունը պարունակում է անհամապատասխանություն մասնակցած ընտրողների թվի վերաբերյալ (այն է՝ ընտրացուցակներում ստորագրած անձինք), որը 1,349-ով ավելի է, քան քվեաթերթիկների ելունդների թիվը (այն է՝ տրամադրված քվեաթերթիկներ):

Ընտրողների մասնակցության թիվը ամենացածրն էր թիվ 35 ԸԸՀ-ում (61.45 տոկոս) եւ ամենաբարձրն էր թիվ 28 ԸԸՀ-ում (84.29 տոկոս): Յուրաքանչյուր ՏԸՀ-ի համար ԿԸՀ կողմից թողարկված արդյունքները պարունակում են մի շարք անոմալ արդյունքներ: Հայաստանում կան թվով 1,923 ՏԸՀ, որոնցից 1,670-ն ունեն 300 եւ ավելի գրանցված ընտրողներ: Դրանցից 95-ում մասնակցությունը գերազանցել է 90 տոկոսը, եւ դրանց շարքում 44-ում մասնակցությունը եղել է ավելի քան 95 տոկոս:

Անհավանական բարձր մասնակցություն է նկատվել Երեւանի կոնկրետ ՏԸՀ-ներում, օրինակ՝ Մալաթիա Սեբաստիա եւ Էրեբունի համայքներում (թիվ 7, 8 եւ 13 ԸԸՀ-ներ) եւ մարզերում, օրինակ՝ Արտաշատում, Արարատի մարզ (թիվ 17 ԸԸՀ), Մեծամորում, Արմավիրի մարզ (թիվ 20 ԸԸՀ), Սեվանում եւ Մարտունիում, Գեղարքունիքի մարզ (թիվ 23 եւ 24 ԸԸՀ-ներ), Աբովյանում, Կոտայքի մարզ (թիվ 28 ԸԸՀ) եւ Գորիսում ու Կապանում, Սյունիքի մարզ (թիվ 37 եւ 38 ԸԸՀ-ներ) [24]: Օրինակ, թիվ 8/23 ՏԸՀ-ում, որտեղ մինչ ընտրության օրը գրանցված են եղել 1,780 ընտրող, մասնակցել են 1,772 ընտրող (99.83 տոկոս) եւ թիվ 37/22 ՏԸՀ-ում, որտեղ մինչ ընտրության օրը գրանցված են եղել 838 ընտրող, մասնակցել են 841 ընտրող (100.36 տոկոս): Նույնիսկ հաշվի առնելով Սերժ Սարգսյանի սերտ ընտանեկան կապերը Գորիսի շրջանում (թիվ 37 ԸԸՀ), չորս ՏԸՀ-ների արդյունքները ապշեցուցիչ են, այն պատճառով, որ այդտեղ նա ստացել է քվեների ավելի քան 99 տոկոսը. Ընտրողների մասնակցությունը եղել է 97-99.5 տոկոս[25]: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՆԱ կողմից վերջնական արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ այն ՏԸՀ-ները, որոնցում մասնակցությունը միջինից բարձր է եղել, նաեւ Սերժ Սարգսյանի օգտին քվեների տոկոսը եղել է ավելի բարձր:

Ըստ ԿԸՀ արդյունքների արձանագրության եղել է 35,798 անվավեր քվեաթերթիկ (այն կազմում է բոլոր քվեների մոտ 2 տոկոսը): Անվավեր քվեաթերթիկների թիվը տարբերվում էր. 5.81 տոկոս թիվ 3 ԸԸՀ-ում եւ 0.88 տոկոս թիվ 23 ԸԸՀ-ում:

Թիվ 3 ԸԸՀ-ում որոշ ՏԸՀ-ների կողմից քվեաթերթիկների անվավեր ճանաչումը մտահոգության տեղիք է տալիս, օրինակ՝ թիվ 3/13 ՏԸՀ-ում 1,225 քվեաթերթիկների մոտ 28 տոկոսը (345 քվե) անվավեր էին: Այս տարածքի մյուս չորս ՏԸՀ-ներում անվավեր քվեաթերթիկները թիվը 10 տոկոսից ավելին էր[26]:

ՏԸՀ տվյալների այլ անոմալիաների թվում են որոշ դեպքեր, երբ քվեատուփում եղած քվեաթերթիկների թիվը գերազանցել է ընտրողներին տրված քվեաթերթիկների թիվը,

---

[24] Համաձայն ԿԸՀ նախագահի այս ընտրատեղամասերում բարձր մասնակցությունը կարող է բացատրվել զինվորականների քվեարկության հանգամանքով:

[25] Թիվ 37/18, 37/29, 37/38 և 37/39 ՏԸՀ-ներում:

[26] Թիվ 3/06 (10.3%), 3/10 (24%), 3/19 (20.5%), 3/20 (19.7%) ՏԸՀ-ներում:

օրինակ՝ թիվ 7/21 ՏԸՀ-ում քվեների թիվը (վավեր եւ անվավեր) 80-ով ավելի էր, քան ընտրողներին տրված քվեաթերթիկները: Եւ հակառակ դեպքում, երբ որոշ ընտրատեղամասերում քվեատուփում եղած քվեաթերթիկների թիվը նշանակալիորեն պակաս էր տրամադրված քվեաթերթիկների թվից, օրինակ՝ թիվ 9/21 ՏԸՀ-ում ընտրողներին տրվել է 61 քվեաթերթիկ ավելի, քան օգտագործվել է (վավեր եւ անվավեր): Տասը ՏԸՀ-ներում գրանցվել է տրված քվեաթերթիկներից տաս եւ ավելի քվե: 23 ՏԸՀ-ներում քվեատուփում եղած քվեաթերթիկների քանակը տաս եւ ավելի քվեաթերթիկով պակաս է եղել ընտրողներին տրված քվեաթերթիկների թվից:

VI. ԴԻՄՈՒՄՆԵՐ ԵՒ ԲՈՂՈՔՆԵՐ

Ընտրությունների օրը ԸՄԴԱ դիտորդների ստացած տեղեկատվության համաձայն հարաբերականորեն քիչ թվով բողոքներ են գրանցվել ՏԸՀ-ներում եւ ԸԸՀ-ներում: Պարոն Տեր-Պետրոսյանի ներկայացուցիչը հայտնել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՆԱ-ին, որ թեկնածուի վստահված անձինք փորձել են գրանցել ավելի շատ բողոքներ, բայց այդ գործընթացին խոչընդոտել են ՏԸՀ-ները: Սույն պնդումը հիմնավորելու համար նա ցույց տվեց ՏԸՀ-ների կողմից չգրանցված բողոքների 103 արձանագրություն: Նա հայտարարել է, որ փորձել է եւս 122 բողոքների արձանագրություն ներկայացնել, որոնք ԿԸՀ քարտուղարը հրաժարվել է ընդունել փետրվարի 23-ին, շաբաթ օրը, համարելով այդ օրը «ոչ աշխատանքային»: Որոշ ԸՄԴԱ դիտորդներ զեկուցել են դեպքերի մասին, երբ ՏԸՀ-ն հրաժարվել է բողոքները գրանցել իրենց մատյաններում կամ ընդունել պաշտոնական բողոք[27]:

Հետընտրական շրջանում ԿԸՀ ստացել է 19 բողոք: Դրանք չեն քննվել բաց նիստի ժամանակ: ԿԸՀ-ի գրավոր պատասխանները բողոքներին առնչվող միակ հանրամատչելի փաստաթղթերն են, եւ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՆԱ-ն տեղեկություններ չունի ԿԸՀ-ի կողմից ստացված բողոքների հիմքերի վերաբերյալ արված որեւէ իմաստալի քննության մասին[28]: Ընդհանուր առմամբ, ԿԸՀ կողմից դիմումների եւ բողոքների քննումը բողոքատուներին չի տրամադրվել պաշտպանության արդյունավետ միջոց, եւ ոչ էլ նպաստել է ընտրական մարմինների անկողմնակալության նկատմամբ հանրության վստահությունը, եւ մտահոգության տեղիք է տալիս նրա կողմից Ընտրական օրենսգրքի 32(1) հոդվածում ամրագրված՝ քաղաքացիների ընտրական իրավունքի պաշտպանության պարտավորության իրագործման վերաբերյալ:

Օրինակ՝ Արթուր Բաղդասարյանի վստահված անձը մանրամասն մի բողոքի մեջ պնդում էր, որ մի քանի ՏԸՀ-ներում ՏԸՀ անդամներին ստիպել են հեռանալ տեղամասից եւ դրանից հետո տեղի են ունեցել լցոնումներ[29]: Բողոքին ԿԸՀ-ն պատասխանել է նամակով, որում ասվում է,

---

27 Օրինակ՝ թիվ 05/11 ՏԸՀ-ում (Սերժ Սարգսյանի երկու վստահված անձանց միաժամանակ ներկայության հետ կապված) և թիվ 31/27 ու 23/03 ՏԸՀ-ներում: Թիվ 30/23 ՏԸՀ-ում նախագահը թույլատրել է վստահված անձին բողոք ներկայացնել այն բանի վերաբերյալ, որ մի ընտրողի տրվել է երկու քվեաթերթիկ, միայն այն բանից հետո, երբ քվեների հաշվարկն և արձանագրությունների կազմումն ավարտվել էին:

28 Օրինակ՝ թիվ 5/04 ՏԸՀ-ում ՏԸՀ-ի սկզբնական հաշվարկից հետո 117 անվավեր քվեաթերթիկներ կային: Պահանջվել էր վերահաշվարկ կատարել, որի արդյունքում բացահայտվել էր, որ այս քվեաթերթերից որոշները պրն. Տեր-Պետրոսյանի օգտին տրված վավեր քվեաթերթիկներ էին: Բողոք էր ներկայացվել ԿԸՀ-ին՝ պահանջելով անց կացնել «քվեաթերթիկների փորձագիտական զննություն»: ԿԸՀ-ն մերժել է հարցին ընթացք տալ:

29 Թիվ 7/05, 7/25, 8/17, 11/6, 13/1, 17/1, 17/2, 17/3, 28/7, 28/26 ՏԸՀ-ներում:

որ «դիմումում նշված փաստերը կեղծ են: Այդ փաստերը ստուգվել են համապատասխան հանձնաժողովների հետ»: ԿԸՀ նամակին կցված էին համապատասխան ՏԸՀ եւ ԸԸՀ նախագահների նամակները, որտեղ ժխտվում էր որեւէ արտասովոր դեպքի գոյությունը: Հատկանշական է, որ այս ընտրատեղամասերի մի մասում եղել են անսովոր արդյունքներ, օրինակ՝ թիվ 28/26 ՏԸՀ-ում, որտեղ գրանցված է 1,961 ընտրող, մասնակցությունը 89 տոկոսից ավելի էր եւ Սերժ Սարգսյանը ստացել էր քվեների 95 տոկոսից ավելին, իսկ թիվ 17/2 եւ 17/3 ՏԸՀ-ներ, որտեղ մասնակցությունը ազգային միջին ցուցանիշից նույնպես բարձր էր (88 եւ 87 տոկոս համապատասխանաբար):

ԿԸՀ-ի եւ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ստացված մի քանի դիմումներ ուղարկվել են դատախազություն: Մարտի 1–ի դրությամբ դատախազությունը հայտնել է, որ ընտրական խախտումների առնչությամբ հարուցվել է 35 քրեական գործ: Դրանց մի մասը վերաբերում են ընտրությունների օրը կատարված դեպքերին, ինչպես օրինակ տեղամասերում անձի վրա կատարված հարձակման, հանձնաժողովի անդամների աշխատանքների խոչընդոտմանը եւ ընտրությունների արդյունքների կեղծմանը[30]: Թիվ 9/31 ՏԸՀ նախագահն իրեն մեղավոր է ճանաչել ընտրությունների արդյունքների կեղծման մեջ եւ դատապարտվել երկու տարվա ազատազրկման: Փետրվարի 29-ին դատախազությունը հայտնել է, որ պարոն Տեր-Պետրոսյանի Շիրակի մարզի շտաբի պետը իրեն մեղավոր է ճանաչել մի շարք ՏԸՀ-ներում լուրջ ընտրական խախտումների մասին կեղծ հաշվետվություն ներկայացնելու մեջ[31]:

Ընտրական օրենսգիրքը հստակ չի ամրագրում բողոքարկման իրավական ուղիները: Ընտրական օրենսգրքի հոդված 40(2)-ի համաձայն «ԸԸՀ որոշումների, գործողությունների կամ անգործության վերաբերյալ բողոքները պետք է ներկայացվեն վարչական դատարան», մինչդեռ հոդված 41.1(11)-ը ԿԸՀ-ին իրավասություն է տալիս «քննարկել ընտրական հանձնաժողովների որոշումների եւ գործողությունների վերաբերյալ դիմումներ եւ բողոքներ, վերանայել կամ փոխել ընտրական հանձնաժողովների այն որոշումները, որոնք հակասում են օրենսգրքին»[32]:

Վերը նշվածի հիմքերով թեկնածուների վստահված անձինք եւ ՏԸՀ անդամները բողոքներ եւ դիմումներ են ներկայացրել ԿԸՀ վերահաշվարկի պահանջի մերժման կամ թիվ 16 ԸԸՀ-ում վերահաշվարկի կարգի խախտման վերաբերյալ: Մեծամասամբ ԿԸՀ-ն պատասխանել է, որ այս դիմումները պետք է ուղարկել վարչական դատարան[33]: Ոչ հստակ, այդ թվում նորաստեղծ վարչական դատարանի կառուցվածքին եւ վերջինիս կողմից ընտրական վեճերի

---

30 Օրինակ՝ ֆիզիկական հարձակում և թիվ 28/07 ՏԸՀ-ից վստահված անձի բռնի հեռացում; թիվ 8/21 ՏԸՀ-ում ՏԸՀ-ի նախագահի և ՏԸՀ-ի անդամի վրա ֆիզիկական հարձակում; Թիվ 36/34 ՏԸՀ-ում ֆիզիկական վնաս պատճառող ֆիզիկական հարձակում; թիվ 13/16 ՏԸՀ-ում տեղական դիտորդի և լրագրողի վրա ֆիզիկական հարձակում: «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցության նախագահ Պետրոս Մակեյանը ձերբակալվել է և կալանավորվել այն բողոքի հիման վրա, թե նա խոչնդոտել է թիվ 34/06 ՏԸՀ-ի աշխատանքներին:

31 Թիվ 33/63, 33/64, 33/65, 33/71, 33/72, 33/75, 33/76, 33/77, 33/78, 33/79 ՏԸՀ-ներում:

32 40(6) հոդվածը, որում գրված է "ՏԸՀ-ում ընտրությունների արդյունքների վերահաշվարկ կատարելու պահանջ կարող է ներկայացվել միայն համապատասխան ՏԸՀ-ին մինչև քվեարկության հաջորդ օրվա ժամը 14.00 –ը»: 40(5) հոդվածը նախատեսում է , որ ընտրական հանձնաժողովների որոշումները և այլն, կարող են բողոքարկվել Վարչական դատարանում՝ բացառությամբ վերահաշվարկի այն պահանջների, որոնք կանոնակարգվում են 40(6) հոդվածով և վերջնական արդյուների բողոքարկումը, որը կանոնակարգվում է 40(9) հոդվածով:

33 ԿԸՀ-ն իրավական պարտավորություն չունի այս գործերն իր նախաձեռնությամբ դատարան ուղարկելու:

քննության իրավասությանը[34] վերաբերող իրավական դրույթների առկայության պարագայում ԿԸՀ-ն չի ապահովել բողոքների արդյունավետ քննարկում, հետեւաբար, *de facto* խոչընդոտել է բողոքատուների իրավունքների իրականացմանը: Ի վերջո, վարչական դատարանում չի գրանցվել ոչ մի բողոք, հետընտրական գործընթացում ընտրական բողոքների լուծման հարցում այն նշանակալի դեր չի խաղացել:

Ընտրությունների արդյունքները կարող են բողոքարկվել Սահմանադրական դատարանում: Փետրվարի 27-ին Տիգրան Կարապետյանը դիմել է Սահմանադրական դատարան՝ ընտրությունների արդյունքները չեղյալ համարելու հայցադիմումով: Փետրվարի 29-ին դատարան է դիմել նաեւ Լեւոն Տեր-Պետրոսյանի կողմից: Դատարանը համաձայնել է սկսել լսումները մարտի 4-ին: Որոշում կայացնելու իրավական վերջնաժամկետը մարտի 10-ն է: Բոլոր մնացած բողոքարկման գործընթացների վերջնաժամկետները սպառվել են:

[34] Վարչական դատարանը ստեղծվել են վերջերս դատական բարեփոխումների շարունակական գործընթացի արդյունքում: Եվ 2007թ.-ի դեկտեմբերին Ընտրական օրենսգրքում կատարված փոփոխություններով դրանց իրավասություն են տվել քննելու ընտրությունների հետ առնչվող դիմում-բողոքները: Սա շփոթություն է ստեղծել այն հարցի վերաբերյալ, թե որ մարմինն է իրավասու վերահաշվարկին առնչվող բողոքները քննարկելու համար: